

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ՝ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՒԼՈՒՄ

Միեր Շահգեղյան

Հոդվածում ներկայացված են մի շարք հարցեր, որոնք առնչվում են քաղաքական մոդեռնիզացիայի և զարգացման ընթացքում քաղաքական որոշումների ընդունման հիմնախնդիրներին: Որոշումների ընդունման գործընթացը դիտարկվում է մոդեռնիզացիայի ազատական և պահպանողական տեսությունների, ինչպես նաև անցումային քաղաքական գործընթացների համատեքստում: Քննարկվում են իշխանության մարմինների, և ընդհանուր վերցրած՝ որոշումների ընդունման կենտրոններում քաղաքական որոշումների ընդունման մեթոդների և ընթացակարգերի հիմնահարցերը:

Տոտալիտար և ավտորիտար ռեժիմներից ժողովրդավարության անցման գործընթացը բավականին երկարատև, աշխատատար և բարդ է. ըստ էության, այն նոր տիպի քաղաքական համակարգի ստեղծում է նշանակում: Սակայն մինչև վերջինիս առավել կամ պակաս ավարտուն ձևով ստեղծվելը՝ կարող է առաջանալ մի իրավիճակ, որը կբնորոշվի օրենսդրական վակուումով և պետական կառավարչական գործառույթների ոչ հստակությամբ, ինչն իր հերթին ստեղծում է կառավարչական վակուում: Վիճակը բարդանում է այն պատճառով, որ հին քաղաքական մշակույթը, քաղաքական վարքի կանոնները սպառում են իրենց, իսկ նորերը դեռևս չեն ստեղծվել: Դա չափազանց վտանգավոր է, քանի որ կարող է առաջ բերել քաղաքական անկայունություն, արդյունքում կստեղծվեն *որոշումների ընդունման իշխանության բազմաթիվ կենտրոններ*, որտեղ ընդունվող որոշումները կարող են հակասության մեջ մտնել միմյանց հետ: Նշվածը կարող է դառնալ կոնֆլիկտի պատճառ, որն իր հերթին կարող է որոշ դեպքերում լուծվել ուժի կիրառման և զինված բախման, զինված հեղաշրջումների միջոցով:

Զարգացման տվյալ սցենարին մենք բազմիցս ականատես ենք եղել նախկին «սոցիալիստական ճամբարի» և Խորհրդային Միության տարածքում ու հատկապես Անդրկովկասի երկու ետտոտալիտար հանրապետությունների՝ Ադրբեջանի և Վրաստանի տարածքում տեղի ունեցած դեպքերին հետևելիս՝ նրանց անկախացման առաջին տարիներին: Արևմտյան մասնագետներն այդ սցենարների իրականացումը դիտարկել և հետազոտել են ասիական և լատինաամերիկյան մի շարք երկրներում: Հիմնականում այդ երկրների փորձի ուսումնասիրության և արևմտյան ժողովրդավարական պետությունների պատմության վերլուծության հիման վրա ստեղծվել են քաղաքական մոդեռնիզացիայի*

* Տվյալ աշխատությունում այս եզրի *արդիականացում* թարգմանությունը նպատակահարմար չէ:

բազմաթիվ տեսություններ [1, 2]:

Արտասահմանյան գիտական շրջանակներում քաղաքական մոդեռնիզացիայի այսպես կոչված պահպանողական ուղղության ներկայացուցիչները (օրինակ՝ Ս. Հանտինգտոնը), համարում են, որ անցումային շրջանում քաղաքական համակարգի կայունությունն ու զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է ավտորիտար կառավարչական մեխանիզմների հաստատում, իսկ քաղաքական գործունեությունը հիմնականում պետք է կենտրոնացվի էլիտայի ներսում: Սկզբնական փուլում այդտեղ է իրականանում նաև քաղաքական մրցակցությունը:

Ազատական ուղղության ներկայացուցիչները (Լ. Պայ, Ռ. Դարենդորֆ) գտնում են, որ անցումային շրջանում կայունությունը և զարգացումը կարելի է ապահովել միայն կառավարողների և ժողովրդական զանգվածների միջև երկխոսության իրականացման միջոցով, իսկ էլիտայի դերը բարձրանում է հասարակական մոբիլիզացիայի ժամանակ:

Երկու ուղղությունների ներկայացուցիչներն էլ վերջնական նպատակը տեսնում են ժողովրդավարական ռեժիմի կայացման մեջ: Սակայն պահպանողական ուղղության ներկայացուցիչները կարծես թե չեն նկատում և բավարար չափով չեն մշակում ազատականացման, քաղաքական գործընթացներին ժողովրդական զանգվածների մասնակցության աստիճանի բարձրացման, ժողովրդավարական կոնսենսուսի փուլային կայացման անհրաժեշտությունը: Իրենց հերթին, ազատական ուղղության ներկայացուցիչները՝ վերափոխումների սկզբնական փուլում, երբ դեռ չկան պետական և հասարակական կառավարման պետականորեն փորձարկված մեխանիզմներ, իրավական դաշտն ավելի քան թերի է, չի ձևավորվել նոր տիպի քաղաքական մշակույթ, թերագնահատում են քաղաքական և հասարակական կառավարչական գործընթացների և հասարակական մոբիլիզացիայի, ինչպես նաև քաղաքական մրցակցության, քաղաքական մշակույթի, խաղի կանոնների ստեղծման գործում էլիտայի որոշիչ դերը:

Մոդեռնիզացիայի իրականացման ընթացքում որոշումների ընդունման կամ իրականացման առավել կամ պակաս չափով սահուն գործընթաց ապահովելու համար, *որոշումների ընդունման իշխանության կենտրոնը* պետք է ապահովի այդ որոշումների լեգիտիմությունը և կոնսենսուսը՝ համագործակցությունը հասարակության մեջ: Ըստ մի շարք մասնագետների, որևէ կոնսենսուսի առկայությունը նշանակում է, որ իշխանությունը լեգիտիմ է: Սակայն այդպիսի կարծիքի հետ չի կարելի համաձայնվել: Հարցն այլ կլիներ, եթե խոսքը լեգալության վերաբերյալ լիներ: Կոնսենսուսը կարող է լինել իրական և «պարտադրված»: Այսինքն՝ եթե ընդունենք, որ կոնսենսուսը իր բնույթով օպերացիոնալ, ինստրումենտալ է, ի տարբերություն լեգիտիմության, որն արժեքավորող է, ապա բացահայտ է դառնում, որ կոնսենսուսը, որպես գործելա-

կերպ և գործելու պատրաստականություն, կարող է պարտադրված լինել: Եթե հետևելու լինենք վերը նշված գաղափարին, ապա կստացվի, որ իրենց պատմական զարգացման որևէ շրջանում, այնպիսի տոտալիտար երկրներ, ինչպիսիք էին՝ նացիստական Գերմանիան, ստալինյան ԽՍՀՄ-ը, որտեղ անշուշտ գոյություն ուներ կոնսենսուս քաղաքացիների շրջանում, ապահովում էին ցանկացած որոշման լեգիտիմությունը:

Ժողովրդավարական ռեժիմներում իրական կոնսենսուսը ենթադրում է համաձայնություն հիմնարար արժեքների, նպատակների և հիմնական քաղաքական հաստատությունների շուրջ, փոքրամասնության ենթարկում մեծամասնության կողմից ընդունված որոշումներին՝ միաժամանակ ապահովելով քննադատության և ընդդիմության իրավունք: Ենթադրվում է, որ կոնսենսուս պետք է լինի մոտակա նպատակների և քաղաքական գործընթացների շուրջ, որը պետական իշխանության բարձրագույն մարմիններում իր արտահայտությունը կգտնի կոնսենսուսով որոշումների ընդունման մեջ: Սակայն վերջինս համարյա թե պրոբլեմային է դառնում անցումային շրջանում, երբ բազմաթիվ կուսակցություններ, որոնք ունեն լրիվ հակառակ գաղափարախոսական, աշխարհայացքային և այլ կանխադրույթներ, ներկայացված են լինում երկրի օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնում:

Խորհրդարանական բանավեճերը, որոնց պատճառները տարբեր են լինում (իսկ անցումային շրջանում գտնվող երկրներում հաճախ պատգամավորների մասնագիտական ունակությունների ցածր մակարդակի և փորձագետների ու տեղեկատվա-հաշվողական համակարգի թերության արդյունքն են), բնականորեն կարող են առճակատման մթնոլորտ ստեղծել և քաղաքական ու սոցիալական-տնտեսական վերափոխությունների նկատմամբ հավատի ճգնաժամ առաջացնել: Դա բարդանում է նաև այն պատճառով, որ անցումային շրջանում, որպես կանոն, ուժեղանում է սոցիալական անհավասարությունը, մեծանում է հասարակական մարզինալ շերտերի քանակը, որոնք առավել մեծ չափով հակված լինելով արմատականության՝ կարող են պահանջել կառավարությունից՝ խիստ բևեռացված որոշումներ ընդունել: Մարզինալ շերտերի կողմից պահանջվող արմատական որոշումներն իրենց բնութիւնով տարբերվում են անցումային շրջանում ժողովրդավարության կայացման համար անհրաժեշտ աստիճանական, փուլային, արմատական որոշումներից, քանի որ խիստ բևեռացված են և չունեն այն հետևողական բնույթը, որն անհրաժեշտ է նոր քաղաքական համակարգի կառուցման համար: Արդյունքում՝ քաղաքական պլանավորումը անհնար է դառնում:

Այդ մարզինալ շերտերը, դուրս մնալով ինստիտուցիոնալիզացիայի գործընթացից և չներգրավվելով որոշումների ընդունման կարգավորող գործընթացին, բիֆուրկացիոն կետեր են ստեղծում:

Պետք է նկատի ունենալ նաև այն փաստը, որ մարգինալ խմբերին, որպես կանոն, արմատականությանը զուգահեռ հատուկ է նաև պահպանողականությունը: Այս երևույթն արդեն ինքնըստինքյան այնպիսի ներքին, մարգինալ խավերի կողմից հաճախ չգիտակցված կոնֆլիկտի աղբյուր է, որը կոնսենսուսի հնարավորությունը հավասարեցնում է զրոյի:

Որպեսզի առճակատման միտումները չտեղափոխվեն հանրություն, անհրաժեշտություն է առաջանում նախ և առաջ կոնսենսուս ապահովել տարբեր էլիտար շերտերի շրջանում: Դա ունի իր որոշակի դժվարությունները, քանի որ էլիտայի ներսում պետք է ձևավորվի և զարգանա քաղաքական մրցակցությունը: Լատինաամերիկյան և ասիական շատ երկրների փորձը ցույց է տվել, որ ներէլիտային տարբերությունները հաճախ խիստ գաղափարախոսական բնույթ են կրում, մրցակցությունը քողարկված է, իսկ ընդդիմությունը հաճախ վերափոխվում է դիմադրության և ծայրահեղ բնույթ է ստանում: Էլիտաները և հատկապես քաղաքական էլիտայի տարբեր շերտեր հաճախ միմյանց կործանարար են համարում երկրի ապագայի համար, ինչը հատուկ չէ արևմտյան հասարակություններին:

Այս հակասությունների լուծումը և կոնսենսուսի հաստատումը կարող է լուծվել երկու ճանապարհով:

Առաջինը արևմտյան ճանապարհն է, որի դեպքում հաջորդականության և աստիճանակարգման հիման վրա բավարարվում են որոշումների դաշտի տարբեր շերտերի իշխանական ձգտումները: Մրցակցությունը դարձվում է ակներև, ինստիտուցիոնալ բնույթ է ստանում ընտրությունների տեսքով և ընթանում է հասարակական ոլորտի հսկողության ներքո: Մեծ նշանակություն են ստանում սակարկման տեխնոլոգիաները, մեծանում է հասարակական բանակցությունների և պայմանագրերի նշանակությունը: Այս գործընթացը երկար ժամանակ է պահանջում, քանի որ հիմնվում է որոշակի քաղաքական մշակույթի դաշտի վրա:

Մյուս ճանապարհը իր հիմքում ունի սկզբնական փուլում բարեփոխումների նախաձեռնող խմբի, կամ, այլ կերպ ասած՝ *որոշումների ընդունման իշխանության կենտրոնի* գերակայությունը և պետական պատերնալիզմը: Տեղի է ունենում սկզբնական մրցակցային առավել թեժ պայքարի որոշակի սահմանափակում. որոշումների ընդունման որոշակի մոնոպոլիզացիան հնարավորություն է ընձեռնում ստեղծել կայուն իրավիճակ և դաշտ նախապատրաստել նոր մեխանիզմների կայացման համար: Համագործակցությունն իրականացվում է լոյալության սկզբունքի հիման վրա: Հետագա գործընթացներն արդեն ենթադրում են որոշումների ընդունման տեղափոխություն դեպի ներքև, ինչն ուղեկցվում է հասարակական իշխանության և ազդեցության կենտրոն-

ների բազմապատկումով և *որոշումների ընդունման իշխանության կենտրոնի* միջև բաժանարար սոցիալական սահմանագծերի թուլացմամբ:

Այս կամ այն երկրում ե՛լ առաջին, ե՛լ երկրորդ ճանապարհները պետք է ապացուցեն իրենց արդյունավետությունը, որպեսզի դառնան լեգիտիմ: Միաժամանակ, որևէ քաղաքական համակարգ պետք է կարողանա արագորեն ապացուցել իր արդյունավետությունը: Իսկ արդյունավետությունն առաջին հերթին ապահովվում է նոր օրենքների ընդունմամբ, այսինքն՝ ձևական կառուցվածքների ստեղծմամբ և դրանց արդյունավետ գործառնությամբ:

Ձևափոխելով ամերիկյան քաղաքագետ Ս. Լիպսեթի [3] կողմից առաջարկվող լեգիտիմության սահմանումը, ըստ որի «լեգիտիմությունը համակարգի ունակությունն է՝ առաջացնել և պահպանել ժողովրդի հավատն առ այն, որ իր քաղաքական հաստատությունները առավել չափով համապատասխանում են տվյալ հասարակության *պահանջներին*», մենք կարող ենք ասել, որ օրենքների լեգիտիմությունը համակարգի ունակությունն է՝ առաջացնել և պահպանել ժողովրդի հավատն առ այն, որ իր օրենսդրական համակարգը և մասնավորապես առանձին օրենքներ առավել չափով համապատասխանում են տվյալ հասարակության պահանջներին: Այս սահմանումն օպերացիոնալ է, եթե հաշվի առնենք, որ օրենսդրական համակարգը նույնպես հանրային հաստատություն է համարվում մի շարք մասնագետների կողմից:

Երբ մենք ասում ենք, որ ձևական կառուցվածքները մասամբ են աշխատում, նկատի ունենք, որ քաղաքական համակարգի նպատակների իրականացման մեխանիզմները չեն համապատասխանում կյանքի պահանջներին: Այդ մեխանիզմների կիրառմամբ ընդունված որոշումները, լինեն դրանք նորմատիվ թե հատկապես կառավարչական բնույթի, պետության կառավարելիության բավարար աստիճան չեն ապահովում: Այս հիմնախնդիրը կարելի է արմատապես լուծել միայն մեկ ձևով՝ նոր ձևական կառուցվածք ստեղծելով: Սակայն օրինաստեղծ գործունեությունը, որը պետական իշխանության օրենսդրական ճյուղի իրավասության մեջ է մտնում, երկարաժամկետ գործընթաց է և հաճախ ավելի է երկարում անցումային շրջանին հատուկ այնպիսի երևույթի պատճառով, ինչպիսին երկրի ներկայացուցչական բարձրագույն մարմնում տեղեր ստացած տարբեր քաղաքական ուժերի՝ համագործակցության գնալու պատրաստականության պակասն է: Եվ, ի տարբերություն արդեն հիմնականում կայացած երկկուսակցական և բազմակուսակցական համակարգերի, նոր կայացող քաղաքական համակարգերում քաղաքական կազմակերպությունների քանակը շատ ավելի մեծաթիվ է, նպատակներն ու գործելակերպի կանոնները՝ անորոշ, պետության առջև դրված խնդիրների լուծման ճանապարհների մասին պատկերա-

ցումները՝ հաճախ հակադիր:


Այս հակասությունները բացահայտվում են որոշումների ընդունման իշխանության կենտրոնի օրենսդիր իշխանության մարմնում: Որոշումների տարածքի այս երկու բաղկացուցիչ մասերում արագ և համաձայնեցված որոշումների ընդունման հնարավորության աստիճանը ցածրանալով՝ բացառում է միջավայրի պահանջներին արագ արձագանքելու հնարավորությունը, որոշումները հաճախ դառնում են ուշացած և դրանց իրականացումն անարդյունավետ դառնալով՝ կարող են ֆլուկտուացիոն գործընթացներ առաջացնել և խթանել: Այդպիսի իրավիճակում, որոշումների ընդունման գործընթացն սկսում է կենտրոնանալ գործադիր իշխանության մարմնի ձեռքում:

Անցումային շրջանում գտնվող քաղաքական համակարգերում որքան թերի է իրավական դաշտը, այնքան կայունությունն ապահովելու նպատակով որոշումների ընդունման գործընթացը օրինաչափորեն կենտրոնանում է գործադիր իշխանության մարմինների ձեռքում:

Կամ որքան ցածր է ձևայնացման մակարդակը անցումային շրջանում գտնվող քաղաքական համակարգերում, իսկ նոր ոչ ձևական կառուցվածքները դեռևս արմատավորված չեն, այնքան քաղաքական կայունությունն ապահովելիս՝ որոշումների ընդունման գործընթացը օրինաչափորեն կենտրոնանում է որոշումների ընդունման իշխանության կենտրոնի մեկ ճյուղի՝ գործադիր իշխանության մարմնի ձեռքում:

Տվյալ օրենքը կարելի է ներկայացնել նաև կոորդինատային համակարգի միջոցով (տե՛ս այս էջի ներքևում):

Կա սակայն շատ կարևոր մի գործոն, որի անտեսումն անթույլատրելի է: Դա քաղաքական մշակույթն է: Կախված նրանից, թե ինչպիսին է արժեքային համակարգը, ավանդույթները, քաղաքական վարքի կանոնները, իշխանության նկատմամբ ավանդական վերաբերմունքը և այլն, գործադիր իշխանության մարմինների ձեռքում որոշումների ընդունման կենտրոնացման աստիճանը կարող է տատանվել:



Անցումային փուլում գտնվող պետություններում ժողովրդավարական ռեժիմ ստեղծելու մեծագույն երաշխիքը տնտեսական առաջընթացն է: Վերջին երեսուն-քառասուն տարիների համաշխարհային փորձը ցույց է տվել, որ այն երկրները, որտեղ ավտոկրատական և նույնիսկ դիկտատորական կառավարման պայմաններում տնտեսական առաջընթաց է արձանագրվել, աստիճանական անցում են կատարել դեպի ժողովրդավարություն: Գործում է և հակառակ օրինաչափությունը:

Քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլում ետարդյունաբերական (պոստինդուստրիալ) տնտեսության բնույթն այնպիսին է, որ պահանջում է ե՛լ «սպիտակ», ե՛լ «կապույտ օձիքների» մասնակցությունը տնտեսական կառավարման գործընթացին, այսինքն՝ քաղաքական ժողովրդավարության հետ միաժամանակ կայանում է տնտեսական ժողովրդավարությունը: Եվ այստեղ արդեն շատ հետաքրքիր ձևով մարքսիստական հայտնի թեզը, այն է՝ քաղաքականությունը տնտեսության խտացված արտահայտությունն է, օպերացիոնալ նշանակություն է ստանում և սկսում է «աշխատել» «տնտեսական ժողովրդավարությունից՝ քաղաքական ժողովրդավարություն» և «տնտեսական որոշումների ընդունման մասնակցությունից՝ քաղաքական որոշումների ընդունման մասնակցություն» անցման ուղիագծով: Սոցիալ-տնտեսական բնագավառում ունեցած հաջողությունները և տնտեսական առաջընթացը թույլ են տալիս մեղմել սոցիալական լարվածությունը, որը տեղափոխվելով քաղաքական բնագավառ և ինստիտուցիոնալ բնույթ ստանալով՝ հստակեցնում է իշխանության համար պայքարող քաղաքական կազմակերպությունների շրջանակը՝ լայնացնելով և ավելի ընդգրկում դարձնելով որոշումների դաշտը:

Անցումային փուլում տնտեսական առաջընթացը կարող է ունենալ նաև հակառակ՝ ավտոկրատիայի ամրապնդման միտում: Այս պարագայում, գործադիր իշխանության կողմից իրականացվող քաղաքականության արդյունքները կարող են թույլ տալ վերջինիս լեգիտիմացնել իր բոլոր որոշումներն ու իր կողմից ընդունված օրենսդրական ակտերը նույնիսկ այն դեպքում, երբ դրանք լեգալ չեն, այսինքն՝ ընդունվել և իրականացվում են գործող օրենքներին հակառակ: Դա թույլ կտա ավելի ու ավելի ամրապնդել ավտոկրատական ռեժիմը: Սակայն պետք է ընդգծել, որ քաղաքական գործընթացի այդպիսի զարգացումը բացառապես մտավոր կառույց է և մնում է տեսական մակարդակի վրա, քանի որ, ինչպես վերը նշվեց, վերջին երեսուն տարիների փորձը ապացուցում է, որ իրականում կյանքն ընթանում է հակառակ ուղղությամբ: Չիլիի և Հարավային Կորեայի օրինակները բավական ցայտուն են:

Անցումային փուլում ուսումնասիրելով գործադիր և օրենսդիր իշխանության ձեռքում որոշումների ընդունման գործընթացի կենտրոնացման երևույթը և դիտարկելով հետագա զարգացման սցենարները՝ մենք

կարող ենք տեսնել, որ ժողովրդավարացումն ուղեկցվում է որոշումների ձևակերպման և ընդունման կենտրոնների բազմապատկմամբ: Որոշում ընդունող կենտրոնների բազմապատկում կա նաև ժամանակակից զարգացած արևմտյան երկրներում: Ավելին՝ շատ արևմտյան մասնագետներ, օրինակ՝ ֆրանսիացի ժ. Լոմմը [4], գտնում են, որ ժողովրդավարական հաստատություններում նույնպես գոյություն ունի իշխանությունների բազմապատկում՝ կապված իշխանության գործառույթների տարաբաշխման հետ: Սակայն արևմտյան ժողովրդավարությունների և այժմ անցումային փուլում գտնվող երկրների միջև կա մի մեծ տարբերություն. առաջիններում արդեն մշակվել են սոցիալական շարժումների քաղաքական ինստիտուցիոնալիզացիայի և որոշումների լեգիտիմացման մեխանիզմներ, ինչն ապահովում է պետության կայունությունը:

Որոշումների ընդունման իշխանության կենտրոնի կողմից ընդունվող քաղաքական որոշումների լեգիտիմությունն անցումային փուլում ապահովելու համար անհրաժեշտ է.

1. ապացուցել, որ նախկինում ընդունված քաղաքական որոշումների իրականացումն արդյունավետ է եղել, և ինչպես էլիտայի տարբեր խմբավորումների, այնպես էլ հասարակական լայն զանգվածների սպասումներն իրականացվել են.

2. որոշումների դաշտում գրավել իրական գործող կամ պոտենցիալ ունեցող առավել ազդեցիկ հասարակական խմբերին և խավերին՝ նրանց հնարավորություն տալով ազդել քաղաքական որոշումների ձևակերպման գործի վրա.

3. ըստ հնարավորին հանրային որոշումների ընդունման մասնակից դարձնել հասարակական լայն խավերին՝ իրականացնելով որոշումների ընդունման կենտրոնների բազմապատկում, միաժամանակ հիերարխիայի անհրաժեշտ մակարդակ պահպանելով:

Ըստ էության, այս երեք հիմնական պահանջների իրականացումն անցումային շրջանում կարող է ապահովել *որոշումների ընդունման իշխանության կենտրոնի* և գործունեության լեգիտիմությունը և իրական կոնսենսուս: Դա թույլ կտա հասարակական էներգիան ուղղել քաղաքական համակարգի արդիականացման, զարգացման և հզորացման գործին: Սակայն անհրաժեշտ է չմոռանալ, որ մարդիկ իրենց համագործակցության հիմնարար և, միգուցե, իդեալական նպատակ են համարում իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր սպասելիքների իրականացումը, իրենց՝ որպես անհատների զարգացման հնարավորության ստեղծումը: Դրանով է գրավիչ ժողովրդավարությունը: Եվ անցումային շրջանում ընդունված որևէ որոշում պետք է ծառայի այդ նպատակների իրականացումն ապահովող քաղաքական համակարգի ստեղծմանը:

Աղբյուրներ և գրականություն

1. Н. П. Расповов, Политическое развитие и модернизация, Ниж. Нов., 1994, с. 23.
2. L. Salleron, Le Fondement du Pouvoir dans l'Entreprise, P., 1965, pp. 23, 35, 40.
3. S. Lipset, Political Man, N. Z., p. 77.
4. J. Lomme, Pouvoir et Societé Economique, P., 1966, pp. 43-46.

Ստացանքի 22, 2003 թ.

ПРИНЯТИЕ ПОЛИТИЧЕСКИХ РЕШЕНИЙ В ОРГАНАХ
ВЛАСТИ В ПЕРЕХОДНОМ ПЕРИОДЕ

Мгер Шахгелдян

Резюме

В статье рассматриваются проблемы принятия политических решений при модернизации и развитии политических систем. Процесс принятия решений представлен в контексте либеральной и консервативной теорий политической модернизации, а также переходных политических процессов. Обсуждаются методики и процедуры принятия решений в органах власти и в более широком смысле в центрах принятия политических решений.